Universal Communications

«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, 0025
Սայաթ-Նովա 40/1
Հեռ. (+374) 11 44-44-44
Ֆաքս (+374) 60 44-44-41
Էլ. փոստ info@ucom.am
Վեբ կայք www.ucom.am

"UCOM" LLC
40/1 Sayat-Nova Ave
Yerevan 0025, Armenia
Phone: (+374) 11 44-44-44
Fax: (+374) 60 44-44-41
E-mail: info@ucom.am
Web: www.ucom.am

0393002

Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման պայմանագիր N 011/11/11/2014

ք. Երևան «29» դեկտեմբեր 2014թ.

«Յուքոմ» ՍՊ Ընկերությունը, ի դեմս ընկերության փոխտնօրեն տնօրեն Արամ Բաբաեդյանի, ով գործում է N 002/14 լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից, և ՀՀ Աշխատանքի նախարարության «Աշխատանքային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն, ի դեմս տնօրեն Եղիշե Խերանյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից (այսուհետ՝ Բաժանորդը և Օպերատորը միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին մատուցել էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություն» կամ «Ծառայություններ»), որոնց նկարագրության, քանակի և սակագնային փաթեթների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներում և/կամ Օպերատորի պաշտոնական վեբ կայքում (www.ucom.am), իսկ Բաժանորդը պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

2. Ծառայությունների մատուցման հիմնական պայմանները

2.1. Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունները պատշաճ կերպով ստանալու համար Պայմանագիրը ստորագրելուց հետո Օպերատորի կողմից Բաժանորդին է տրամադրվում Սարք:

2.2. Պայմանագրի իմաստով «Սարք» է համարվում այն սարքավորումը կամ սարքավորումները, որոնց միջոցով Օպերատորը կազմակերպում կամ մատուցում է իր ծառայությունները:

2.3. Օպերատորի կողմից Սարքը տեղադրելուց, կարգաբերելուց և այն Բաժանորդի տիրապետմանը հանձնելուց հետո Բաժանորդի և Օպերատորի միջև կնքվում է Սարքի

հանձնման-ընդունման ակտ, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.4. Բաժանորդն ընդունում է, որ Սարքը համարվում է Օպերատորի կողմից պատշաճ կերպով տեղադրված, կարգաբերված և իրեն հանձնված Օպերատորի կողմից Բաժանորդին Պայմանագրով նախատեսված Ծառայությունները փաստացի մատուցելու պահից:

2.5. Օպերատորի կողմից տրամադրվող Սարքը, մալուխը և դրանց պատկանելիքներն ու մասերը, ինչպես նաև Օպերատորի կողմից դրանց վրա կատարված ցանկացած փոփոխության և/կամ վերանորոգման արդյունք, եթե այլ բան գրավոր կերպով նախատեսված չէ Կողմերի միջև, համարվում են Օպերատորի սեփականությունը:

2.6. Բաժանորդը չի կարող իրեն տրամադրված Սարքը, մալուխը, դրանց պատկանելիքներն ու մասերը վճարովի կամ անհատույց հիմունքներով փոխանցել, վարձակալությամբ տրամադրել երրորդ անձի կամ որևէ փոփոխության ենթարկել: Պայմանագրի լուծման դեպքում Օպերատորի կողմից տրամադրված Սարքը, մալուխը, դրանց պատկանելիքներն ու մասերը վերադարձվում են Օպերատորին:

2.7. Բաժանորդը պարտավոր է փոխհատուցել իր կողմից Սարքի անբարեխիղճ պահպանման, ոչ լիազորված վերանորոգման, Սարքի վրա տեղադրված հոլոգրաֆիկ տարբերանշանի կանխամտածված ջնջման, փոփոխման կամ այլ կերպ վնասման հետևանքով Օպերատորին հասցված բոլոր վնասները:

2.8. Օպերատորի աշխատակիցների կողմից տեղադրված Սարքերի կարգաբերման, տեղադրման, հանձնման, սպասարկման և այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացման բացառիկ իրավունքը պատկանում է Օպերատորի աշխատակիցներին:

2.9. Այն դեպքում, երբ Ծառայությունը մատուցվում է Օպերատորի կողմից տրամադրվող մալուխով, Բաժանորդը պատասխանատու է մալուխի շենք մտնելու և շենքում մալուխի անցկացման թույլտվությունների ձեռքբերման համար:

2.10. Բաժանորդը պարտավորվում է Պայմանագրով մատուցվող Ծառայություններից օգտվել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:

2.11. Ֆիքսված հեռախոսակապի ծառայությունից օգտվելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է իրեն տրամադրված հեռախոսահամարն օգտագործել այն աշխարհագրական տարածքում, որի համար, համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 20.12.2012թ. թիվ 540Ա որոշման, հատկացված է տվյալ տարածքային կոդը:

2.12. Պայմանագրի 2.11. կետը խախտելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ փոխհատուցել վերջինիս կրած բոլոր վնասները՝ Օպերատորի կողմից այդ մասին Բաժանորդին ծանուցելուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1. Օպերատորն իրավունք ունի՝

3.1.1. Բաժանորդից պահանջել ժամանակին վճարելու Պայմանագրով փաստացի մատուցված Ծառայությունների դիմաց,

3.1.2. Բաժանորդի կողմից Պայմանագրի պայմանների և կետերի խախտման դեպքում միակողմանի հրաժարվել Պայմանագրի կատարումից և ապամոնտաժել իր կողմից տեղադրված մալուխներն ու Սարքը,

3.1.3. Բաժանորդի կողմից Պայմանագրի 5.1 կետով սահմանված ժամկետում չվճարելու

դեպքում Բաժանորդից պահանջել վճարելու տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ամսական վճարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով,

3.1.4. մատուցված Ծառայությունների դիմաց Բաժանորդի կողմից Պայմանագրի 5.1. կետով սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում Բաժանորդին ժամանակավորապես անջատել ցանցից՝ մինչև վերջինիս կողմից գոյացած պարտքի ամբողջական մարումը,

3.2. **Օպերատորը պարտավոր է՝**

3.2.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով՝ Պայմանագրում ամրագրված պայմաններին և ժամկետներին համապատասխան,

3.2.2. Պայմանագրի գործողության ընթացքում Ծառայություններից օգտվելու համար Բաժանորդին հատկացնել Սարքը և/կամ կատարել համապատասխան ցանցային միացումներ՝ կապված Սարքի տեղադրման հետ,

3.2.3. ողջամիտ ժամկետում անհատույց իրականացնել Սարքի վերանորոգման, վերականգնման աշխատանքները՝ ի հայտ եկած Սարքի արտադրական խոտանի դեպքում, և վերացնել ի հայտ եկած սխալներն ու անսարքությունները, եթե այդ թերությունները գտնվում են Օպերատորի հսկողության տակ,

3.3. **Բաժանորդն իրավունք ունի՝**

3.3.1. պահանջել Օպերատորից Պայմանագրի կնքման պահից սկսած 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրեն տրամադրել Պայմանագրի 1.1. կետում նշված Ծառայությունները, եթե Ծառայությունների տրամադրման ընթացքում ի հայտ չեն եկել անլուծելի տեխնիկական խնդիրներ,

3.3.2. պահանջել Օպերատորից իրեն տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ մատուցվող Ծառայություններից ճիշտ և անվտանգ օգտվելու համար:

3.4. **Բաժանորդը պարտավոր է՝**

3.4.1. ժամանակին և Պայմանագրով սահմանված կարգով վճարել փաստացի մատուցված Ծառայությունների համար Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված վճարը, անգամ եթե Օպերատորի հսկողությունից դուրս գտնվող տեխնիկական կամ այլ պատճառների հետևանքով, Բաժանորդը չի օգտվել Ծառայություններից, կամ եթե վերջինս չի կարողացել կարգաբերել սեփական ցանցը և ապահովել Ծառայությունների որակյալ ընդունումը:

4. Ծառայությունների մատուցման կասեցումը, դադարեցումը և վերաակտիվացումը

4.1. Օպերատորն իրավունք ունի կասեցնել, սահմանափակել կամ դադարեցնել Բաժանորդին մատուցվող Ծառայությունները՝ առանց այդ մասին վերջինիս նախապես ծանուցման, եթե Բաժանորդը՝

4.1.1. օգտագործել է չսertիֆիկացված և/կամ Օպերատորի ցանցի հետ անհամատեղելի կամ ցանցի պատշաճ աշխատանքին խոչընդոտող սարք,

4.1.2. խախտել է Պայմանագրի պայմանները կամ ՀՀ գործող օրենսդրության պահանջները:

4.2. Բաժանորդը կարող է անվճար կարգով ժամանակավորապես կասեցնել/դադարեցնել մատուցվող Ծառայությունները 10 (տասը) օրից մինչև 2 (երկու) ամիս ժամկետով՝ Օպերատորին ներկայացնելով համապատասխան դիմումը և վճարելով մինչ այդ օրն իրեն մատուցված Ծառայությունների դիմաց:

4.3. Բաժանորդի կողմից դիմումում նշված Ծառայությունների մատուցումը ժամանակավորապես կասեցնելու/դադարեցնելու ժամկետը լրանալուց հետո Բաժանորդին մատուցվող Ծառայություններն ավտոմատ կերպով վերսկսվում են: Եթե Բաժանորդը ցանկանում է ժամանակավորապես կասեցնել/դադարեցնել իրեն մատուցվող Ծառայություններն ավելի քան երկամսյա ժամկետով, ապա նա համապատասխան դիմումը ներկայացնելուց հետո պարտավոր է Օպերատորին հետ վերադարձնել Սարքը՝ կատարելով համապատասխան վճարումներ, եթե այդպիսիք սահմանված են Օպերատորի կողմից, այդ թվում՝ վճարային պարտքը, տույժերը, Օպերատորի կողմից կատարված աշխատանքների և այլ փաստացի կատարված ծախսերի դիմաց վճարները:

5. Ծառայությունների գինը և վճարման կարգը

5.1. Բաժանորդը Պայմանագրով սահմանված Ծառայությունների համար վճարում է Օպերատորի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրի հիման վրա Ծառայությունների մատուցման համապատասխան ամսվա ավարտից հետո առավելագույնը 45 (քառասուն հինգ) օրվա ընթացքում:

5.2. Բաժանորդի կողմից Պայմանագրով սահմանված Ծառայությունների համար վճարումը համարվում է կատարված Օպերատորի կողմից Բաժանորդին ներկայացված հաշիվ-ապրանքագրում նշված Օպերատորի բանկային հաշվեհամարին վճարումը (գումարը) մուտք լինելու պահից:

5.3. Ծառայությունների մատուցման ամսվա ընթացքում Օպերատորի մեղքով (Օպերատորի ցանցի անսարքությունների հնարավոր անջատումների) առաջացած թերությունների ընդհանուր ժամանակահատվածը, որը հաշվարկվում է Օպերատորի անսարքության քարտերի համակարգում, չպետք է գերազանցի ամսական թույլատրելի սահմանաչափը՝ 16 (տասնվեց) ժամը: Ամսական այդ թույլատրելի սահմանաչափը գերազանցող ժամանակահատվածի համար կատարվում է Ծառայության ամսական վճարի նվազեցում, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$A = \frac{B \times C}{D}$$

Որտեղ՝

A - Ծառայությունների ամսական վճարից նվազեցվող գումար

B - Ծառայությունների ամսական արժեք

C - Ամսական թույլատրելի սահմանաչափը գերազանցող ժամերի քանակ

D - Միջին ամսական ժամերի քանակ, որը հավասար է 729.6 (30.4 /միջին ամսական օրերի թիվ/ x 24 /1 օրվա ժամերի քանակ/):

5.4. Պայմանագրի հավելվածներով սահմանված վճարներից բացի, հեռուստատեսային առանձին ծառայությունների և ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների դեպքում Բաժանորդից կարող են գանձվել հավելյալ վճարներ՝ Օպերատորի վեբ կայքում տեղադրված և Օպերատորի սպասարկման գրասենյակներում ներկայացված պայմաններին և սակագներին համապատասխան:

5.5. Պայմանագրի հավելված(ներ)ով սահմանված ֆիքսված հեռախոսակապի ծառայության վճարը համարվում է բաժանորդավճար (ամսավճար), որը գանձվում է Բաժանորդից

անկախ վերջինիս կողմից տվյալ ամսվա ընթացքում հեռախոսակապի ծառայությունից օգտվելու հանգամանքից, հեռախոսակապի ծառայությունից օգտվելու օրերի կամ նշված ծառայության դադարեցված/կասեցված օրերի քանակից:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Օրենքի թույլատրելի սահմաններում Կողմերը սույնով հրաժարվում են միմյանց անուղղակի վնասների և բաց թողնված օգուտների հատուցման պահանջներից: Ցանկացած պարագայում Օպերատորի պատասխանատվությունը Բաժանորդի հանդեպ չի կարող գերազանցել Բաժանորդին մատուցվող Ծառայությունների դիմաց տվյալ ամսվա համար գանձվող ամսական գումարի՝ Օպերատորի մեղքով Ծառայություններից օգտվելու անհնարինության ժամկետին համամասնորեն հաշվարկված գումարը:

6.2. Բաժանորդը պարտավորվում է Պայմանագրի լուծման դեպքում 7 (յոթ) օրվա ընթացքում հնարավորություն ստեղծել Օպերատորի մասնագետների համար ապամոնտաժելու Սարքը, մալուխը, ինչպես նաև դրանց պատկանելիքներն ու մասերը: Սույն կետով նախատեսված ժամկետում նման հնարավորություն չստեղծելու կամ այն սահմանափակելու դեպքում Օպերատորն իրավասու է Բաժանորդից պահանջել որպես տույժ վճարել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

6.3. Օպերատորը պատասխանատվություն չի կրում.

6.3.1. դժբախտ պատահարի կամ իր գործընկերների (այդ թվում՝ օտարերկրյա) կամ գործակալների միջոցով փոխանցվող ազդանշանների կամ մատուցվող Ծառայությունների խափանման կամ դադարեցման հետևանքով առաջացած ընդհատումների, անջատումների, խափանումների կամ որոշակի տեսակի Ծառայությունների, Սակագնային Պլանների/Փաթեթների մեջ կատարված փոփոխությունների համար,

6.3.2. Բաժանորդին պատկանող սարքավորման/ումների անսարքության պատճառով Ծառայությունների պատշաճ չընդունման կամ ընդհատման համար,

6.3.3. աշխատանքների, մասնավորապես՝ ընթացիկ, ցանցի ամրապնդման, պահպանման, ընդարձակման կամ վերանորոգման հետևանքով առաջացած ընդհատումների և խափանումների համար, եթե դրանք չեն գերազանցում ամսական 16 (տասնվեց) ժամը:

6.4. Բաժանորդն իրավունք չունի այլ անձի օտարել կամ փոխանցել Պայմանագրով ստանձնած իր իրավունքներն ու պարտականությունները: Բաժանորդն է Օպերատորի համար հանդիսանում միակ պատասխանատուն՝ Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, վճարումները ժամանակին չկատարելու, ինչպես նաև Օպերատորին պատճառված իրական վնասի համար:

6.5. Օպերատորը պատասխանատվություն չի կրում վճարումներն ընդունող միջնորդի կողմից սահմանված կանոնների համաձայն որևէ լրացուցիչ միջնորդավճարի գանձման համար:

6.6. Բաժանորդը պատասխանատու է Սարքի, ինչպես նաև Սարքն օգտագործելու համար հանձնման-ընդունման ակտի հիման վրա իրեն փոխանցված կամ Սարքին միացված սարքավորումների, մալուխների, լարերի և այլ պարագաների համար և դրանց փչացման, սխալ օգտագործման, կորստի, վնասվածքի կամ հափշտակության դեպքում պարտավոր է

Օպերատորին փոխհատուցել դրանց արժեքը լրիվ ծավալով՝ պատճառված վնասին համամասնորեն:

7. *Պայմանագրի գործողության ժամկետը*

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում **2015թ. հունվարի 01-ից** և գործում է **1** (մեկ) տարի ժամկետով: Պայմանագրի ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) օր առաջ մյուս Կողմին Պայմանագիրը լուծելու մասին գրավոր կերպով չտեղեկացնելու դեպքում Պայմանագրի գործողության ժամկետը յուրաքանչյուր անգամ երկարաձգվում է 1 (մեկ) տարի ժամկետով: Երկարաձգումների քանակը սահմանափակված չէ:

7.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ: Նախաձեռնող Կողմը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցում ուղարկել մյուս Կողմին առնվազն 30 (երեսուն) օր առաջ:

7.3. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում նշված մատուցվող Ծառայությունների հասցե/ների փոփոխության դեպքում Բաժանորդը պարտավորվում է առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ այդ մասին ծանուցել Օպերատորին:

7.4. Պայմանագրի գործողության դադարեցումը Կողմերին չի ազատում միմյանց նկատմամբ Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած պարտավորությունների կատարումից:

8. *Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-մաժոր)*

8.1. Պայմանագրով պարտավորությունները մասնակիորեն կամ ամբողջությամբ չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, սաբոտաժը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարումը:

8.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավել, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով մյուս Կողմին:

9. *Եզրափակիչ դրույթներ*

9.1. Պայմանագրի ցանկացած փոփոխություն կամ լրացում կատարվում է գրավոր՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. Կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել մյուս Կողմի կոնֆիդենցիալ տեղեկատվության գաղտնիության պահպանման համար և չհրապարակել այն երրորդ անձանց առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության՝ բացառությամբ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

9.3. Պայմանագրի շրջանակում Կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի վեճերի լուծումը հանձնել ՀՀ տարածքում իրավասու դատարանի քննությանը:

9.4. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

9.5. Պայմանագրին կից հավելվածները հանդիսանում են վերջինիս անբաժանելի մասը:

10. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Օպերատոր	Բաժանորդ
«Յուրոմ» ՍՊԸ Իր. հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն.4 Գործ. հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1 Հեռ.՝ 374 11 444444 Ֆաքս՝ 374 60 444441 ՀՎՀՀ 00024873 «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ Հ/Հ 001-264993-001	ՀՀ Մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ Իր. հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2. 3 Գործ. հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2. 3 Հեռ.՝ 010585196 ՀՎՀՀ 02597322
Գլխավոր տնօրեն՝ Ա. Բաբսեղյան	Տնօրեն՝ Խերանյան

Հավելված 1
29.12.2014թ. կնքված թիվ 011/11/11/2014
Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման պայմանագրի

Ծառայության (Ծառայությունների) նկարագիրը, քանակը և սակագները

ք. Երևան «29» դեկտեմբեր 2014թ.

1. Տրամադրվող Ծառայություններ

N	Նկարագրություն	Ամսավճար (ՀՀ դրամ)	Հասցեներ
1	UlPhone Corporate+ 011516310; 011516311; 011519038; 011519306; 011519307; 011521225; 011521276; 011521960; 011521972; 011521973; 011523983; 011523922; 011526297; 011526869; 011529307; 011529310; 011529320; 011529349; 011529350; 011529900; 011564050; 011564546; 011564868; 011566065; 011568409; 011585499; 011523932	67 500	ք. Երևան, Կառավարության 3-րդ շ.
2	Data Extra 1 Մբ/վ	11440	ք. Երևան, Կառավարության 3-րդ շ.
3	UlPhone Corporate+ 011523733; 011525794; 011565118; 011585851; 011529332	12 500	ք. Երևան, Բյուզանդի 1/3, հարկ 6
4	UlPhone Corporate+ 011230301; 011234702; 011235086; 011230109	10 000	ք. Երևան, Կոմիտասի պ. 51շ., հարկ 4

2. Ծառայությունների սակագները

2.1.Ծառայության (Ծառայություններ) ամսական վճարը կազմում է 101 440 (մեկ հարյուր մեկ հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Օպերատոր

«Ցուրտ» ՍՊԸ
Իր. հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն.4
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1
Հեռ.՝ 374 11 444444
Ֆաքս՝ 374 60 444441
ՀՎՀՀ 00024873
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 001-264993-001

Տնօրեն՝

Փոխտնօրեն՝

_____Ա. Բաբսեղյան

Բաժանորդ

ՀՀ Մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
Իր. հասցե՝ ք. Երևան, Կառավարական շ. 3
Գործ. հասցե՝ ք. Երևան, Կառավարական շ. 3
Հեռ.՝ 010585196
ՀՎՀՀ 02597322

Տնօրեն՝

_____Հ. Մելքոնյան

0393002

Համաձայնագիր

«Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին» թիվ 011/11/11/2014 պայմանագրում և դրա Հավելված 1-ում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ

ք. Երևան «16» փետրվար 2016թ.

«Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության փոխտնօրեն/կոմերցիոն տնօրեն Արամ Բարսեղյանի, ով գործում է N 002/14 լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից, և ՀՀ Մշակույթի նախարարության «Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Եղիշե Խերանյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից (այսուհետ միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»), ղեկավարվելով Կողմերի միջև 29/12/2014թ. կնքված «Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին» թիվ 011/11/11/2014 պայմանագրով (այսուհետ՝ «Պայմանագիր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.

1.1. Պայմանագրի 1-ին կետում ավելացնել հետևյալ ենթակետը.

«Աշխարհագրական սկզբունքով տրամադրվող ֆիքսված հեռախոսակապի ծառայությունից օգտվելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է իրեն տրամադրված հեռախոսահամարն օգտագործել այն աշխարհագրական տարածքում, որի համար, համաձայն ՀՀ Հաղորդային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 20.12.2012թ. թիվ 540Ա որոշման, հատկացված է տվյալ տարածքային կոդը: Սույն կետը խախտելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ փոխհատուցել վերջինիս կրած բոլոր վնասները՝ Օպերատորի կողմից այդ մասին Բաժանորդին ծանուցելուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում»:

1.2. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի 1-ին կետը շարադրել հետևյալ կերպ.

1.Տրամադրվող ծառայություն(ներ)՝

N	Նկարագրություն	Ամսավճար (ՀՀ դրամ)	Հասցեներ
1	U!Phone Corporate+ 011516310; 011516311; 011519038; 011519306; 011519307; 011521225; 011521276; 011521960; 011521972; 011521973; 011523903; 011523922; 011526297; 011526869; 011529307; 011529310; 011529320; 011529349; 011529350; 011529900; 011564050; 011564546; 011564868; 011566065; 011568409; 011585499; 011523932; 011523933; 011523934; 011523935; 011523936; 011523937; 011523938; 011523939; 011523940; 011523941; 011523942; 011523944; 011523945; 011523947; 011523733; 011525794; 011565118; 011585851; 011529332	112 500	ք. Երևան, Վ. Սարգսյան 3
2	Data Extra 1 Մբ/վ	11440	ք. Երևան, Վ. Սարգսյան 3
4	U!Phone Corporate+	10 000	ք. Երևան, Կոմիտասի պ. 51շ., հարկ 4

	011230301; 011234702; 011235086; 011230109		

1.3. Պայմանագրի Հավելված 1-ի 2.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ծառայության (Ծառայությունների) ամսական վճարը կազմում է 133940 (մեկ հարյուր երեսուներեք հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ»:

1.4. Պայմանագրի Հավելված 1-ում ավելացնել 2.2 կետը հետևյալ խմբագրությամբ.
«Կողմերը սույնով ընդունում և համաձայնում են, որ համակցման աշխատանքներից առաջ կատարված չափագրման ժամանակ հաշված երկարությունը կարող է տարբերվել փաստացի օգտագործված մալուխների երկարությունից, ուստի համակցման աշխատանքների դիմաց վճարելու ժամանակ հիմք է ընդունվում ոչ թե չափագրման ժամանակ հաշված երկարությունը, այլ Սարքի հանձնման-ընդունման ակտում նշված՝ փաստացի օգտագործված մալուխների երկարությունը»:

2. Պայմանագրի մյուս կետերը թողնել անփոփոխ:
3. Սույն համաձայնագիրը կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման նշանակման պահից:
5. Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Օպերատոր	Բաժանորդ
«Յուքոմ» ՍՊԸ	ՀՀ Մշակույթի նախարարության
Իր. հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն.4	«Մշակութային ծրագրերի իրականացման
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1	գրասենյակ» ՊՀ
Հեռ.՝ +374 11 444444	Իր. հասցե՝ ք. Երևան, Կառավարական շ. 3
Ֆաքս՝ +374 60 444441	Գործ. հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3
ՀՎՀՀ 00024873	Հեռ.՝ 010585196
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	ՀՎՀՀ 02597322
Հ/Հ 001-264993-001	
Փոխտնօրեն՝	Տնօրեն՝
Ա. Բարսեղյան	Ե. Խերանյան

«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, 0025
Սայաթ-Նովա 40-1
Հեռ. (+374) 11 44-44-44
Ֆաքս (+374) 60 44-44-41
Էլ. փոստ՝ info@ucom.am
Վեբ կայք՝ www.ucom.am

"UCOM" LLC
40/1 Sayat Nova Ave
Yerevan 0025, Armenia
Phone (+374) 11 44-44-44
Fax (+374) 60 44-44-41
E-mail info@ucom.am
Web www.ucom.am

0393002

Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման պայմանագիր N 041/06/02/2014

ք. Երևան «06» փետրվար 2014թ

«Յուքոմ» ՍՊ Ընկերությունը, ի դեմս ընկերության կոմերցիոն տնօրեն Արամ Բաբաեյանի, որ գործում է N 002/13 լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից, և ՀՀ մշակույթի նախարարության Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ, ի դեմս ընկերության տնօրեն Եղիշե Խերանյանի, որ գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից (այսուհետ՝ Բաժանորդը և Օպերատորը միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին։

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին մատուցել էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություններ»), որոնց նկարագրության, քանակի և սակագնային փաթեթների մասին տեղեկությունները ներկայացված են սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածներում և/կամ Օպերատորի պաշտոնական վեբ կայքում (www.ucom.am), իսկ Բաժանորդը պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում

2. Ծառայությունների մատուցման հիմնական պայմանները

2.1. Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունները պատշաճ կերպով ստանալու համար սույն Պայմանագիրը ստորագրելուց հետո անհրաժեշտության դեպքում Օպերատորի կողմից Բաժանորդին է տրամադրվում Սարքը.

2.2 Սույն Պայմանագրի իմաստով «Սարք» է համարվում այն սարքավորումը կամ սարքավորումները, որոնց միջոցով Օպերատորը կազմակերպում կամ մատուցում է իր ծառայությունները։

2.3. Օպերատորի կողմից Սարքը տեղադրելուց, կարգաբերելուց և այն Բաժանորդի տիրապետմանը հանձնելուց հետո Բաժանորդի և Օպերատորի միջև կնքվում է Սարքի հանձնման-ընդունման ակտ, որը հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը

2.4 Օպերատորի կողմից տրամադրվող Սարքը, մալուխը և դրանց պատկանելիքները ո

մասերը, ինչպես նաև Օպերատորի կողմից դրանց վրա կատարված ցանկացած փոփոխության և/կամ վերատեղադրման արդյունք, եթե այլ բան գրավոր կերպով նախատեսված չէ Կողմերի միջև, համարվում են Օպերատորի սեփականությունը:

2.5. Բաժանորդը չի կարող իրեն տրամադրված Սարքը, մալուխը, դրանց պատկանելիքներն ու մասերը վաճառել կամ անհատույց հիմունքներով փոխանցել, վարձակալության տրամադրել երրորդ անձի կամ որևէ փոխանցման ենթարկել: Պայմանագրի լուծման դեպքում Օպերատորի կողմից տրամադրված Սարքը և մալուխը վերադարձվում են Օպերատորին:

2.6. Բաժանորդը պարտավոր է փոխհատուցել իր կողմից Սարքի անբարեխիղճ պահպանման, ոչ լիազորված վերատեղադրման, Սարքի վրա տեղադրված հոլոգրաֆիկ տարբերանշանի կանխամտածված չնչման, փոփոխման կամ այլ կերպ վնասման հետևանքով Օպերատորին հասցված բոլոր վնասները:

2.7. Օպերատորի աշխատակիցների կողմից տեղադրված Սարքերի կարգաբերման, տեղադրման, հանձնման, սպասարկման և այլ անհրաժեշտ աշխատանքների իրականացման բացառիկ իրավունքը պատկանում է Օպերատորի աշխատակիցներին:

2.8. Այն դեպքում, երբ Ծառայությունը մատուցվում է Օպերատորի կողմից տրամադրված մալուխով, Բաժանորդը պատասխանատու է մալուխի շենք մտնելու և շենքում մալուխի անցկացման թույլտվությունների ձեռքբերման համար:

2.9. Ծառայությունների մատուցման նպատակով իրականացվող համակցման աշխատանքները 50 (հիսուն) մետրը չգերազանցելու դեպքում կատարվում են անվճար: 50 (հիսուն) մետրը գերազանցող համակցման աշխատանքների արժեքը յուրաքանչյուր մեկ մետրի համար կազմում է 400 (չորս հարյուր) ՀՀ դրամ, որը Բաժանորդը պարտավորվում է վճարել հաշիվ-ապրանքագիրը ստանալուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

2.10. Բաժանորդը պարտավորվում է սույն Պայմանագրով մատուցվող Ծառայություններից օգտվել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան:

2.11. Ֆիքսված հեռախոսակապի ծառայությունից օգտվելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է իրեն տրամադրված հեռախոսահամարն օգտագործել այն աշխարհագրական տարածքում, որի համար, համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 20.12.2012թ. թիվ 540Ա որոշման, հատկացված է տվյալ տարածքային կոդը:

2.12. Սույն պայմանագրի 2.11. կետը խախտելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ փոխհատուցել վերջինիս կրած բոլոր վնասները Օպերատորի կողմից այդ մասին Բաժանորդին ծանուցելուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում.

3. *Կողմերի իրավունքներն ու պարտականությունները*

3.1. Օպերատորն իրավունք ունի՝

3.1.1. Բաժանորդից պահանջել ժամանակին վճարել սույն Պայմանագրով փաստացի մատուցված Ծառայությունների դիմաց,

3.1.2. Բաժանորդի կողմից սույն Պայմանագրի պայմանների և կետերի խախտման դեպքում միակողմանի հրաժարվել Պայմանագրից և ապամոնտաժել իր կողմից տեղադրված մալուխներն ու Սարքը.

3.1.3. Բաժանորդի կողմից սույն Պայմանագրով սահմանված ժամկետներում չվճարելու

դեպքում Բաժանորդից պահանջել վճարելու առաջ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ամսական վճարի 0.05 (զրո ամբողջ հինգ հազարերորդական) տոկոսի չափով,

3.1.4. մատուցված Ծառայությունների դիմաց վերջինիս կողմից պատշաճ վճարումներ չկատարելու դեպքում Բաժանորդին ժամանակավորապես անջատել ցանցից՝ մինչ վերջինիս կողմից գոյացած պարտքի ամբողջական մարումը,

3.1.5 դադարեցնել Ծառայությունների մատուցումը և լուծել սույն Պայմանագիրը՝ Բաժանորդի կողմից ինտերնետ մուտքի հնարավորությունը ինտերնետի մյուս տերմինալների կամ բաժանորդների նկատմամբ վնասակար գործողությունների իրականացման նպատակով օգտագործելու, ինտերնետ ցանցի էթիկայի կանոններին հակասող գործողություններ իրականացնելու դեպքում, ինչպիսիք են SPAM-ի ուղարկումը, հակաօրենսդրական գործողություններ խրախուսող նյութերի տարածումը, ցանցում գտնվող համակարգիչների նկատմամբ ծրագրային կամ սարքաձևային ոտնձգությունները (հակերությունը):

3.2. Օպերատորը պարտավոր է՝

3.2.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով՝ սույն Պայմանագրում ամրագրված պայմաններին և ժամկետներին համապատասխան,

3.2.2. սույն Պայմանագրի գործողության ընթացքում Ծառայություններից օգտվելու համար Բաժանորդին հասանելի դարձնել Սարքը և/կամ կատարել համապատասխան ցանցային միացումներ՝ կապված Սարքի տեղադրման հետ,

3.2.3. ողջամիտ ժամկետում անհատույց իրականացնել Սարքի վերահսկում, վերականգնման աշխատանքները՝ ի հայտ եկած Սարքի արտադրական խոտանի դեպքում, և վերացնել ի հայտ եկած սխալներն ու անսարքությունները, եթե այդ թերությունները գտնվում են Օպերատորի հսկողության տակ,

3.2.4. սակագների փոփոխությունների մասին Բաժանորդին տեղյակ պահել նոր սակագների կիրառումից առնվազն 30 (երեսուն) օր առաջ:

3.3. Բաժանորդն իրավունք ունի՝

3.3.1. պահանջել Օպերատորից Պայմանագրի կնքման պահից սկսած 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրեն տրամադրել սույն Պայմանագրի 1.2. կետում նշված Ծառայությունները, եթե Ծառայությունների տրամադրման ընթացքում ի հայտ չեն եկել անհրաժեշտ տեխնիկական խնդիրներ,

3.3.2. պահանջել Օպերատորից իրեն տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն՝ մատուցվող Ծառայություններից ճիշտ և անվտանգ օգտվելու համար:

3.4. Բաժանորդը պարտավոր է՝

3.4.1. ժամանակին և սույն Պայմանագրով սահմանված կարգով վճարել փաստացի մատուցված Ծառայությունների համար հաշվեկված 1-ով նախատեսված վճարը, անգամ եթե Օպերատորի հսկողությունից դուրս գտնվող տեխնիկական կամ այլ պատճառների հետևանքով, Բաժանորդը չի օգտվել Ծառայություններից, կամ եթե վերջինս չի կարողացել կարգաբերել սեփական ցանցը և ապահովել Ծառայությունների որակյալ ընդունումը:

4. *Ծառայությունների մատուցման կասեցումը, դադարեցումը և վերակտիվացումը*

4.1. Օպերատորն իրավունք ունի կասեցնել, սահմանափակել կամ դադարեցնել Բաժանորդի մատուցվող Ծառայությունները՝ առանց այդ մասին վերջինիս ծանուցման, եթե

Բաժանորդը՝

4.1.1. օգտագործել է չարտոնված և/կամ Օպերատորի ցանցի հետ անհամատեղելի կամ ցանցի պատշաճ աշխատանքին խոչընդոտող սարք,

4.1.2. խախտել է սույն Պայմանագրի պայմանները կամ գործող օրենսդրության պահանջները:

4.2. Բաժանորդը կարող է անվճար կարգով ժամանակավորապես կասեցնել/դադարեցնել մատուցվող Ծառայությունները 10 (տասը) օրից մինչև 2 (երկու) ամիս ժամկետով՝ Օպերատորին ներկայացնելով համապատասխան դիմումը և վճարելով մինչ այդ օրն իրեն մատուցված Ծառայությունների դիմաց:

4.3. Բաժանորդի կողմից դիմումում նշված Ծառայությունների մատուցման ժամանակավորապես կասեցման/դադարեցման ժամկետը լրանալուց հետո Բաժանորդին մատուցվող Ծառայություններն ավտոմատ կերպով վերականգնվում են: Եթե Բաժանորդը ցանկանում է ժամանակավորապես կասեցնել/դադարեցնել իրեն մատուցվող Ծառայություններն ավելի քան երկամսյա ժամկետով, ապա նա համապատասխան դիմումը ներկայացնելուց հետո պարտավոր է Օպերատորին հետ վերադարձնել Սարքը՝ կատարելով համապատասխան վճարումներ, եթե այդպիսիք սահմանված են Օպերատորի կողմից, այդ թվում՝ վճարովի պարտքը, տույժերը, Օպերատորի կողմից կատարված աշխատանքների և այլ փաստացի կատարված ծախսերի դիմաց վճարները:

5. Ծառայությունների գինը և վճարման կարգը

5.1. Բաժանորդի կողմից սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների համար վճարումը կատարվում է Օպերատորի կողմից հաշիվ-ապրանքագիրը ներկայացնելուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

5.2. Ծառայության մատուցման ամսվա ընթացքում Օպերատորի մեղքով (Օպերատորի ցանցի անսարքությունների հետևանքով) առաջացած թերությունների ընդհանուր ժամանակահատվածը, որը հաշվառվում է Օպերատորի անսարքության քարտերի համակարգում, չպետք է գերազանցի ամսական թույլատրելի սահմանաչափը՝ 16 (տասնվեց) ժամը: Ամսական այդ թույլատրելի սահմանաչափը գերազանցող ժամանակահատվածի համար կատարվում է Ծառայության ամսական վճարի նվազեցում, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$A = \frac{B \times C}{D}$$

Որտեղ՝

A - Ծառայությունների ամսական վճարից նվազեցվող գումար

B Ծառայությունների ամսական արժեք

C - Ամսական թույլատրելի սահմանաչափը գերազանցող ժամերի քանակ

D - Միջին ամսական ժամերի քանակ, որը հավասար է 729.6 (30.4 /միջին ամսական օրերի թիվ՝ x 24 /1 օրվա ժամերի քանակ/):

5.3. Սույն Պայմանագրի հավելվածներով սահմանված վճարներից բացի, հեռուստատեսային առանձին ծառայությունների և ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների դեպքում Բաժանորդից կարող են գանձվել հավելյալ վճարներ՝ Օպերատորի վեբ կայքում տեղադրված և Օպերատորի սպասարկման գրասենյակներում ներկայացված

պայմաններին և սակագներին համապատասխան:

5.4. Սույն Պայմանագրի հավելված(ներ)ով սահմանված ֆիքսված հեռախոսակապի ծառայության վճարը հանդիսանում է բաժանորդավճար (ամսավճար), որը գանձվում է Բաժանորդից անկախ վերջինիս կողմից տվյալ ամսվա ընթացքում հեռախոսակապի ծառայությունից օգտվելու հանգամանքից, հեռախոսակապի ծառայությունից օգտվելու օրերի կամ նշված ծառայության դադարեցված/կասեցված օրերի քանակից:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Օրենքի թույլատրելի սահմաններում Կողմերը սույնով հրաժարվում են միմյանց անուղղակի վնասների և բաց թողնված օգուտների հատուցման պահանջներից: Ցանկացած պարագայում Օպերատորի պատասխանատվությունը Բաժանորդի հանդեպ չի կարող գերազանցել Բաժանորդին մատուցվող Ծառայությունների դիմաց տվյալ ամսվա համար գանձվող ամսական գումարի՝ Օպերատորի մեղքով Ծառայություններից օգտվելու անհնարինության ժամկետին համամասնորեն հաշվարկված գումարը:

6.2. Բաժանորդը պարտավորվում է Պայմանագրի լուծման դեպքում 7 (յոթ) օրվա ընթացքում հնարավորություն տրամադրել Օպերատորի մասնագետների համար ապամոնտաժելու Սարքը, Մոդեմը, ինչպես նաև դրանց պատկանելիքները ու մասերը: Սույն կետով նախատեսված ժամկետում նման հնարավորություն չստեղծելու կամ այն սահմանափակելու դեպքում Օպերատորն իրավասու է Բաժանորդից պահանջել տույժ վճարել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ կետանցի յուրաքանչյուր օրվա համար:

6.3. Օպերատորը պատասխանատվություն չի կրում.

6.3.1. ոճրային պատճառի կամ իր գործընկերների (այդ թվում՝ օպերատորների) կամ գործակալների միջոցով փոխանցվող ազդանշանների կամ մատուցվող Ծառայությունների խափանման կամ դադարեցման հետևանքով առաջացած ընդհատումների, անջատումների, խափանումների կամ որոշակի տեսակի Ծառայությունների, Սակագնային Պլանների/Փաթեթների մեջ կատարված փոփոխությունների համար.

6.3.2. Բաժանորդին պատկանող համակարգչի/ների կամ այլ սարքավորման/ումների անսարքության պատճառով Ծառայությունների պատշաճ չմատուցման կամ ընդհատման համար,

6.3.3. աշխատանքների, մասնավորապես՝ ընթացիկ, ցանցի արդիականացման, պահպանման, ընդլայնման կամ վերակառուցման հետևանքով առաջացած ընդհատումների և խափանումների համար, եթե դրանք չեն գերազանցում ամսական 16 (տասնվեց) ժամը:

6.4. Ինտերնետ հասանելիության ծառայության մատուցման դեպքում սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված(ներ)ում նշված յուրաքանչյուր սակագնային փաթեթ(ներ)ի համար սահմանված արագությունները նախատեսված են Օպերատորի պաշտոնական վեբ կայքում նշված քանակով համակարգիչների միացման և օգտագործման համար: Սահմանված քանակից ավել համակարգիչներ ցանցին միացնելու և ինտերնետ հասանելիության ծառայությունից օգտվելու դեպքում Ծառայությունների ընդհատումների, խափանումների և արագության անկման համար Օպերատորը որևէ պատասխանատվություն չի կրում:

6.5. Օպերատորը ոչ մի վերահսկողություն չի իրականացնում իր ցանցով տեղափոխվող տեղեկատվության նկատմամբ և պատասխանատու չէ Բաժանորդի կողմից ստացված

տեղեկատվության և բովանդակության ճշտության համար: Օպերատորի ցանցի միջոցով տեղափոխվող ցանկացած տեղեկատվություն կամ բովանդակություն օգտագործվում է Բաժանորդի տիրույթով և պատասխանատվությամբ:

6.6. Օպերատորը պատասխանատվություն չի կրում SPAM-ի, հակերային գործունեության, վիրուսների փոխանցման և դրա հետևանքով Բաժանորդին պատճառված վնասների համար:

6.7. Բաժանորդն իրավունք չունի այլ անձի օտարել կամ փոխանցել սույն Պայմանագրով ստանձնած իր իրավունքներն ու պարտականությունները: Բաժանորդն է Օպերատորի համար հանդիսանում միակ պատասխանատուն՝ սույն Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, վճարումները ժամանակին չվճարելու, ինչպես նաև Օպերատորին պատճառված իրական վնասի համար:

6.8. Օպերատորը պատասխանատվություն չի կրում վճարումներն ընդունող միջնորդի կողմից սահմանված կանոնների համաձայն որևէ լրացուցիչ միջնորդավճարի գանձման համար:

6.9. Բաժանորդը պատասխանատու է Սարքի, ինչպես նաև Սարքն օգտագործելու համար հանձնման-ընդունման ակտի հիման վրա իրեն փոխանցված կամ Սարքին միացված սարքավորումների, մոդուլների, լարերի և այլ պարագաների համար և դրանց փչացման, սխալ օգտագործման, կորստի, վնասվածքի կամ հափշտակության դեպքում պարտավոր է Օպերատորին փոխհատուցել դրանց գինը:

7. *Պայմանագրի գործողության ժամկետը*

7.1. Սույն Պայմանագիրը գործում է ուժի մեջ մտնելուց մեկ տարի ժամկետով: Պայմանագրի ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) օր առաջ մյուս Կողմին Պայմանագիրը լուծելու մասին գրավոր կերպով չտեղեկացնելու դեպքում Պայմանագրի ժամկետը երկարաձգվում է հերթական 1 (մեկ) տարի ժամկետով: Երկարաձգումների քանակը սահմանափակված չէ:

7.2. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ: Նախաձեռնող Կողմը պարտավոր է այդ մասին գրավոր ծանուցում ուղարկել մյուս Կողմին առնվազն 30 (երեսուն) օր առաջ:

7.3. Սույն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ում նշված մատուցվող Ծառայությունների հասցե/ների փոփոխության դեպքում Բաժանորդը պարտավորվում է, առնվազն 15 (տասնհինգ) օր առաջ այդ մասին ծանուցել Օպերատորին:

7.4. Պայմանագրի գործողության դադարեցումը Կողմերին չի ազատում միմյանց նկատմամբ Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած պարտավորությունների կատարումից:

8. *Անհաղթահարելի ուժի ազդեցություն (Ֆորս-մաժոր)*

8.1. Սույն Պայմանագրով պարտավորությունները մասնակիորեն կամ ամբողջությամբ չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը

կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, սառնամանիքը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

8.2. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավել, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր ծանուցելով մյուս Կողմին:

9. *Եզրափակիչ դրույթներ*

9.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու և կնքելու պահից:

9.2. Պայմանագրի ցանկացած փոփոխություն կամ լրացում կատարվում է գրավոր՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

9.3. Կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել մյուս Կողմի կոնֆիդենցիալ տեղեկատվության գաղտնիության պահպանման համար և չհրապարակել այն երրորդ անձանց առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

9.4. Սույն Պայմանագրի շրջանակում Կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի վեճերի լուծումը հանձնել ՀՀ տարածքում իրավասու դատարանի քննությանը:

9.5. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

10. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Օպերատոր	Բաժանորդ ՀՀ մշակույթի նախարարության Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ
«Յուքոմ» ՍՊԸ	
Իր. հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն.4	Իր. հասցե՝ ք.Երևան, Ա.Խաչատրյան 33/1, բն 27
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1	Գործ. հասցե՝ ք. Երևան, Կառավարության շենք 3
Հեռ.՝ 374 11 444444	Հեռ.՝ 011585178, 011585196
Ֆաքս՝ 374 60 444441	ՀՎՀՀ 02597322
ՀՎՀՀ 00024873	ՀՀ ՖՆ Աշխատակազմի Գործառնական վարչություն
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	
Հ/Հ 001-264993-001	Հ/Հ 900011077092
Կառավարող տնօրեն՝	Տնօրեն՝
Ա. Բարսեղյան	Ներսիսյան

Սույն Հավելված 1-ը հանդիսանում է
06.02.2014թ. կնքված թիվ 041/06/02/2014
Հեռախոսակապի հաղորդակցության ծառայությունների մատուցման
պայմանագրի անբաժանելի մասը

Հավելված 1

«Ծառայության նկարագիրը, քանակը և սակագները»

ք. Երևան

«06» փետրվար 2014թ.

1. Տրամադրվող Ծառայությունները

N	Նկարագրություն	Ամսավճար (ՀՀ դրամ)	Հասցեներ
1	UlPhone Corporate + 011585178	2500	ք. Երևան, Կառավարության շենք 3
2	UlPhone Corporate + 011585196	2500	ք. Երևան, Կառավարության շենք 3

2. Ծառայությունների սակագները

2.1.Ծառայության (Ծառայությունների) ամսական վճարը կազմում է 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Օպերատոր

«Յուքոմ» ՍՊԸ
Իր. հասցե՝ ք. Երևան, Տերյան 19, բն.4
Գործ. հասցե՝ ք. Երևան, Սայաթ-Նովա 40/1
Հեռ. 374 11 444444
Ֆաքս 374 60 444441
ՀՎՀՀ 00024873
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 001-264993-001

Գլխավոր տնօրեն՝

Ա. Բաբայան

Բաժանորդ

ՀՀ մշակույթի նախարարության Աշխատակազմի ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ
Իր. հասցե՝ ք.Երևան, Ա.Խաչատրյան 33/1, բն.27
Գործ. հասցե՝ ք. Երևան, Կառավարության շենք 3
Հեռ.՝ 011585178, 011585196
ՀՎՀՀ 02597322
ՀՀ ՖՆ Աշխատակազմի Գործառնական վարչություն
Հ/Հ 9000110770[illegible]

Տնօրեն՝

[illegible]

0393002

Համաձայնագիր

«Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին» թիվ 041/06/02/2014 պայմանագրում և դրա Հավելված 1-ում լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ

ք. Երևան «17» փետրվար 2016թ.

«Յուքոմ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության փոխտնօրեն/կոմերցիոն տնօրեն Արամ Բարսեղյանի, ով գործում է N 002/14 լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից, և և ՀՀ մշակույթի նախարարության Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ, ի դեմս ընկերության տնօրեն Եղիշե Խերանյան, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից (այսուհետ միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»), ղեկավարվելով Կողմերի միջև 06/02/2014թ. կնքված «Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման մասին» թիվ 041/06/02/2014 պայմանագրով (այսուհետ՝ «Պայմանագիր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին.
   1.1. Պայմանագրի 1-ին կետում ավելացնել հետևյալ ենթակետը.
   «Աշխարհագրական սկզբունքով տրամադրվող ֆիքսված հեռախոսակապի ծառայությունից օգտվելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է իրեն տրամադրված հեռախոսահամարն օգտագործել այն աշխարհագրական տարածքում, որի համար, համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 20.12.2012թ. թիվ 540Ա որոշման, հատկացված է տվյալ տարածքային կոդը: Սույն կետը խախտելու դեպքում Բաժանորդը պարտավորվում է Օպերատորին ամբողջությամբ փոխհատուցել վերջինիս կրած բոլոր վնասները՝ Օպերատորի կողմից այդ մասին Բաժանորդին ծանուցելուց հետո 7 (յոթ) օրվա ընթացքում»:
   1.2. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի 1-ին կետը շարադրել հետևյալ կերպ.

1.Տրամադրվող ծառայություն(ներ)

N	Նկարագրություն	Ամսավճար (ՀՀ դրամ)	Հասցեներ
1	UIPhone Corporate + 011585178	2500	ք. Երևան, Վ. Սարգսյան 3
2	UIPhone Corporate + 011585196	2500	ք. Երևան, Վ. Սարգսյան 3

   1.3. Պայմանագրի Հավելված 1-ի 2.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ծառայության (Ծառայությունների) ամսական վճարը կազմում է 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ»:
   1.4. Պայմանագրի Հավելված 1-ում ավելացնել 2.2 կետը հետևյալ խմբագրությամբ.
   «Կողմերը սույնով ընդունում և համաձայնում են, որ համակցման աշխատանքներից առաջ կատարված չափագրման ժամանակ հաշված երկարությունը կարող է տարբերվել փաստացի օգտագործված մալուխների երկարությունից, ուստի համակցման աշխատանքների դիմաց վճարելու ժամանակ հիմք է ընդունվում ոչ թե չափագրման ժամանակ հաշված երկարությունը, այլ Սարքի հանձնման-ընդունման ակտում նշված՝ փաստացի օգտագործված մալուխների երկարությունը»:
2. Պայմանագրի մյուս կետերը թողնել անփոփոխ:
3. Սույն համաձայնագիրը կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման և կնքման պահից:

5. Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Օպերատոր

«Յուքոմ» ՍՊԸ
Իր. հասցե` ք. Երևան, Տերյան 19, բն.4
Գործ. հասցե` ք. Երևան, Մայաթ-Նովա 40/1
Հեռ.` +374 11 444444
Ֆաքս` +374 60 444441
ՀՎՀՀ 00024873
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 001-264993-001

Փոխ[illegible]ցիոն տնօրեն`

_______________ Ա. Բարսեղյան

Բաժանորդ

ՀՀ մշակույթի նախարարության Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ ՊՀ
Իր. հասցե` ք. Երևան, Կառավարական շենք N 3, 7-րդ հարկ
Գործ. հասցե` ք. Երևան, Վ. Սարգսյան 3
Հեռ.` 010585196
ՀՎՀՀ 02597322

Տնօրեն`

_______________ Ե.Խերանյան